

Հավելված  
ՀՀ կառավարության 2017 թ.  
դեկտեմբերի 28-ի նիստի N 54  
արձանագրային որոշման

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ**

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ**

## 1. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

1. ՀՀ հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության բարեփոխումների հայեցակարգը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

2. Փաստաթուղթն իր մեջ ամփոփում է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում անհրաժեշտ բարեփոխումների հիմնական ուղղությունները, ներկայացնում է ոլորտներում առկա իրավիճակը, ինչպես նաև տվյալ ոլորտում միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքները: Մասնավորապես ներկայացված է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում ներկայումս իրականացվող կարգավորման քաղաքականությունը, աուդիտորական կազմակերպությունների լիցենզավորման, մասնագետների որակավորման ու աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ իրականացվող որակի հսկողության գործընթացները:

3. Փաստաթղթում անդրադարձ է կատարվում բարեփոխումների առաջարկվող ուղղություններին՝ հաշվի առնելով ներկայումս ընդունված միջազգային լավագույն փորձը, առաջարկվում է ոլորտների կարգավորման ու դրանց նկատմամբ վերահսկողության նոր՝ մասնագիտացված կառույց – հանրային վերահսկողության խորհուրդ մոդելը:

4. Հայեցակարգով առաջարկվում է ճշգրտել նաև պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը, ներկայումս գործող օրենսդրական ձևական պահանջից անցում կատարելով իրապես աուդիտի ենթարկվելու հանրային պահանջ ունեցող ընկերությունների ներգրավելուն: Ներկայում տարբեր օրենքներով պարտադիր աուդիտի ենթակա է 1174 կազմակերպություն, որոնց գերակշիռ մասը (շուրջ 54%-ը) որևէ գործունեություն չիրականացնող բաց բաժնետիրական ընկերություններն են: Բարեփոխումների նպատակն է նաև հստակեցնել նշված կազմակերպությունների շրջանակը՝ աուդիտի պահանջը տարածելու իրապես հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպությունների, այլ ոչ թե ֆորմալ առումով օրենքի պահանջին բավարարող կազմակերպությունների նկատմամբ:

5. Վերջում ներկայացվում են նշված բարեփոխումներից ակնկալվող հիմնական արդյունքները, և դրանք կյանքի կոչելու նախատեսվող ժամանակահատվածի սկիզբը:

## 2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

6. Սույն հայեցակարգային փաստաթղթում ամփոփված են ՀՀ հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության բարեփոխումների հիմնական սկզբունքները, ուղղությունները, նպատակադրումներն ու ակնկալվող արդյունքները:

7. Փաստաթուղթը մշակվել է՝ նպատակ ունենալով ապահովել հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների և շահագրգիռ մարմինների հետ փոխշահավետ քննարկումների բնականոն ընթացքը: Այս առումով, սույն հայեցակարգային փաստաթուղթը նախատեսված է ինչպես ոլորտի պետական կառավարման մարմինների, միջազգային գործընկեր կազմակերպությունների, մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների, այնպես էլ հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում գործունեություն իրականացնող և դրանց վերաբերյալ հետաքրքրություններ ունեցող քաղաքացիների համար:

8. Հայեցակարգը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

## 3. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### I. Հաշվապահական հաշվառման ոլորտում առկա իրավիճակը.

9. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման ոլորտի կարգավորումն իրականացվում է պետության կողմից՝ պետական կառավարման լիազոր մարմնի (ՀՀ ֆինանսների նախարարության) միջոցով, ինչը նշանակում է, որ հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում պետությունն է մշակում կարգավորման քաղաքականությունը, ինչպես նաև այդ քաղաքականության իրականացման մեխանիզմները:

10. Անհրաժեշտ է նշել, որ հաշվապահական հաշվառման ոլորտի արդյունավետ կարգավորում իրականացնելու տեսանկյունից, ընդհանուր առմամբ, առաջնահերթ գործառույթներ են դիտարկվում.

1) հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման մեթոդաբանական հիմքի կամ հիմքերի սահմանումը.

2) նշված մեթոդաբանական հիմքերով առաջնորդվող կազմակերպությունների շրջանակի սահմանումը.

3) ոլորտներում գործունեություն իրականացնող մասնագետների մասնագիտական գիտելիքների ու հմտությունների ստուգումը.

4) մասնագիտական կարողությունների և գիտելիքների պատշաճ մակարդակի պահպանման ապահովումը:

11. Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվությունների պատրաստելու մեթոդաբանական հիմքը սահմանված է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ գործող օրենքով, մասնավորապես, հիշյալ օրենքով սահմանված է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ) և Փոքր և միջին կազմակերպությունների համար նախատեսված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտով (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) առաջնորդվելու իրավական պահանջը: Ընդ որում, ինչպես ամբողջական ՖՀՄՍ-ները, այնպես էլ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն պաշտոնապես թարգմանվել են հայերեն և ՀՀ կառավարության որոշումներով ներդրվել Հայաստանում: Սակայն այստեղ ուշադրության է արժանի ստանդարտներում կատարված փոփոխությունների և նոր ստանդարտների թարգմանությունների ժամանակին և պատշաճ որակով կատարման ապահովումը, որը լուրջ խնդիր է հանդիսանում ինչպես պետության, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների համար:

12. Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ստանդարտների թարգմանության արդիականացումը կատարվում է ոչ բավարար պարբերականությամբ (ներկա պահին ՀՀ-ում գործում են ստանդարտների՝ 2012թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ հիմնադրամի կողմից հրապարակված տարբերակի հայերեն թարգմանությունը): Այնուամենայնիվ, ստանդարտներում կատարվող անընդհատ փոփոխությունները պահանջում են դրանց շարունակական թարգմանություն և ներդնում, որի իրականացումը սակայն պահանջում է ֆինանսական և մասնագիտական նշանակալի ռեսուրսների ներգրավում, ինչպես նաև որոշակի սահմանված ընթացակարգերի պահպանում:

13. ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի կիրառման առումով անհրաժեշտ է նշել, որ թեև, ընդհանուր առմամբ, ստանդարտի կիրառման իմաստով տրվում է փոքր և միջին կազմակերպության բնորոշումը (նկարագրությունը), այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունը հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման տեսանկյունից այդ

կազմակերպությունների շրջանակը չի սահմանում: Միաժամանակ, Հայաստանում գործող կազմակերպությունների գերակշիռ մասը բավարարում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով ներկայացված ՓՄԿ-ների ընդհանուր բնորոշմանը և, ըստ էության, սակավաթիվ կազմակերպություններ ունեն ամբողջական ՖՀՄՍ-ներով առաջնորդվելու իրավական պարտավորություն:

14. Կարևոր նշանակություն ունի նաև գերփոքր ընկերությունների կամ միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման հարցերի կարգավորումը, քանի որ ըստ էության միկրոկազմակերպությունները նույնպես զգալի թվաքանակ են կազմում հայաստանյան տնտեսությունում և վերջիններիս համար հաշվառման պարզեցված համակարգի ներդրումը կխրախուսի միկրոկազմակերպությունների կողմից ֆինանսական հաշվառում վարելու պրակտիկան: Այստեղ շատ կարևոր է նաև օրենսդրությունում միկրոկազմակերպությունների իրավական բնորոշման սահմանումը:

## **II. Աուդիտորական գործունեության ոլորտում առկա իրավիճակը.**

15. Աուդիտորական գործունեության կարգավորման մասով անհրաժեշտ է նշել, որ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ-ում աուդիտն իրականացվում է Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ներկայումս թարգմանված են միայն աուդիտի միջազգային ստանդարտները, մինչդեռ ՀՄԴ հրապարակած Աուդիտի միջազգային ստանդարտների ձեռնարկն իր մեջ բացի վերոհիշյալ ստանդարտներից ներառում է նաև դիտարկման աշխատանքների, հավաստիացման աշխատանքների, հարակից ծառայությունների և հատուկ միջազգային ստանդարտները, որոնց պաշտոնական թարգմանությունն ու ՀՀ-ում ներդրումն դեռևս իրականացված չէ: Բացի այդ էական փոփոխություններ են տեղի ունեցել աուդիտի միջազգային ստանդարտներում 2011-2015թթ. ընթացքում, որոնց թարգմանությունն ու հրապարակումը նույնպես հրատապ խնդիր է հանդիսանում: Այնուամենայնիվ, ինչպես ՖՀՄՍ-ների դեպքում, այստեղ նույնպես թարգմանության աշխատանքների ժամանակին և սահմանված կարգով իրականացումը պահանջում է ֆինանսական և մասնագիտական նշանակալի ռեսուրսների ներգրավում:

16. Մինչև 2013թ. գործող օրենսդրությունը սահմանում էր որոշակի չափանիշներին բավարարող կազմակերպությունների կողմից պարտադիր աուդիտի ենթարկվելու

պահանջ: Մասնավորապես, ի թիվս այլ օրենքներում առկա պահանջների, կազմակերպությունները, որոնց նախորդ տարվա գործունեությունից հասույթը կամ նախորդ տարվա վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցել է մեկ միլիարդ դրամը, ենթակա էին պարտադիր աուդիտի: Արդյունքում տարեկան շուրջ 1000 կազմակերպություններ բավարարում էին նշված պահանջին, որն էլ, ըստ էության, դժգոհություններ էր առաջացրել տնտեսավարողների շրջանում: Ներկայումս պարտադիր աուդիտի ենթակա են տարբեր օրենքների կարգավորման դաշտում գտնվող կազմակերպությունները (ԲԲԸ-ներ, հիմնադրամներ, ֆինանսական ոլորտի կազմակերպություններ, շահումով խաղերի կազմակերպիչներ և այլն):

17. Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում գործունեություն իրականացնող մասնագետների մասնագիտական կարողությունների ստուգումը կամ մասնագիտական որակավորումը ոլորտի կարգավորման համատեքստում նույնպես ունի շատ կարևոր նշանակություն: Անհրաժեշտ է նշել, որ որակավորման համակարգերի արդյունավետությունը մեծապես կախված է դրա հիմքում ընկած կրթական ծրագրերի արդյունավետությունից: Ներկայումս միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցումը պահանջում է Հաշվապահների միջազգային դաշնության կրթական ծրագրերին համապատասխան որակավորման համակարգի առկայություն: Դրա վրա են հիմնված նաև միջազգային ճանաչում ունեցող և ՀՀ օրենսդրությամբ նաև ճանաչված բազմաթիվ մասնագիտական որակավորումների համակարգերը (ACCA, CPA, ՀՀԱԱ և այլն):

18. Հայաստանի Հանրապետության պարագայում մասնագիտական որակավորման աշխատանքների կազմակերպման տեսանկյունից հաշվապահների և աուդիտորների որակավորման գործընթացները ներկայումս տարանջատված են, մասնավորապես.

1) հաշվապահների որակավորման գործառույթը ներկայումս իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որպես հաշվապահական հաշվառման ոլորտի պետական քաղաքականությունը սահմանող լիազոր մարմին (անհրաժեշտ է նշել, որ գործող որակավորման համակարգը հիմնված է մեկանգամյա թեստավորման սկզբունքի վրա և չի ապահովում մասնագիտական գիտելիքների խորը ուսումնասիրություն):

2) աուդիտորների որակավորման գործընթացը կազմակերպվում է Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից: ՀՀԱԱ որակավորման

համակարգը կազմված է Հաշվապահների միջազգային դաշնության՝ ՀՄԴ, (International Federation of Accountants, IFAC) կրթական ստանդարտների հիման վրա /Handbook of International Education Pronouncements/: Հաշվապահների միջազգային դաշնության ութ կրթական ստանդարտները սահմանում են պրոֆեսիոնալ հաշվապահի /աուդիտորի/ պատրաստման՝ ներառյալ կրթության, մասնագիտական փորձի և շարունակական մասնագիտական զարգացման ապահովման համար անհրաժեշտ միջազգային պահանջները: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է թարմացնել նաև ՀՀԱԱ կրթական որոշ ծրագրեր և վերահրատարակել ու արդիականացնել որոշ դասագրքեր:

19. Կարևոր նշանակություն ունի նաև ոլորտներում գործունեություն իրականացնող մասնագիտական կարողությունների և գիտելիքների պատշաճ մակարդակի պահպանման ապահովումը: Պետության կողմից մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման պահանջներ չեն ներկայացվում, իսկ մասնագիտացված կառույցի կողմից այդ պահանջները սահմանված են միայն կառույցի անդամ հանդիսացող մասնագետների համար: Արդյունքում մասնագետների մի ստվար զանգված ՀՀԱԱ-ի կողմից ստանալով աուդիտորի որակավորումը, հետագայում չի պահպանում շարունակական մասնագիտական զարգացման պահանջները, որն էլ ի վերջո անուղղակիորեն ազդեցություն է թողնում աուդիտորական ծառայությունների որակի վրա:

20. Կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում կարգավորման հիմնական գործառույթներն իրականացնում է պետությունը՝ միաժամանակ ներգրավելով նաև մասնագիտական հանրությանը՝ որակավորման քննություններ կազմակերպելու մասով:

### **III. Աուդիտորական կազմակերպությունների լիցենզավորում**

21. Աուդիտորական գործունեության շուկա մուտքի թույլտվությունը ներկայումս իրականացվում է «Աուդիտորական գործունեության մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան: Մասնավորապես, օրենքով լիցենզավորման պայման են հանդիսանում պարտադիր թվով 5 որակավորված աուդիտորներ ունենալու, կազմակերպության կանոնադրական կապիտալի պատկանելիության, կազմակերպա-իրավական ձևին, ղեկավարին ներկայացվող պահանջները:

22. Լիցենզավորումն իրականացվում է պետական լիազոր մարմնի՝ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից:

#### **IV. Աուդիտորական կազմակերպությունների որակի հսկողություն**

23. Աուդիտորական գործունեության արդյունավետությունը և վստահությունը աուդիտի նկատմամբ մեծապես կախված է աուդիտի որակի վերահսկողության արդյունավետ համակարգի առկայությունից: Այստեղ կարևոր նշանակություն ունի աուդիտի որակի վերահսկողության համակարգի առկայությունը, որն ըստ էության պահանջում է բաժր որակավորում ունեցող մասնագետների, այդ թվում աուդիտի ոլորտում գործնական փորձ ունեցող մասնագետների ներգրավում: Հասկանալի է, որ պետական մարմնի կազմում այդպիսի համակարգ ունենալը կապված է ֆինանսական և մասնագիտական զգալի ռեսուրսներ ներգրավելու անհրաժեշտության հետ:

24. Ներկայումս աուդիտի որակի հսկողության գործառույթն իրականացվում է ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից:

#### **4. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ**

25. Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորման արդյունավետ համակարգ ձևավորելու նպատակով անհրաժեշտ է պետական մարմնի հաշվապահական հաշվառման ու աուդիտի մասնագիտության կարգավորման որոշակի գործառույթներ պատվիրակել մասնագիտական կազմակերպություններին: Ըստ այդմ, ՀՀ Ֆինանսների նախարարությունը կարող է վերանայել իր դերը՝ ստանձնելով մասնագիտության նկատմամբ հսկողությունն իրականացնողի գործառույթը, միաժամանակ՝ օրենքով ստեղծելով նաև մասնագիտացված ինքնակարգավորվող կառույց: Ներկայումս ՀՀ Ֆինանսների նախարարության և ՀՀԱԱ-ի գործառույթներն այդ տեսանկյունից մի շարք առումներով կրկնորդում են միմյանց, և նման պատվիրակումը թույլ կտա ապահովել ռեսուրսների ավելի արդյունավետ տեղաբաշխում: Բացի այդ, նախարարության կողմից առավել հսկողամետ դերի ստանձնումն ավելի է համապատասխանում ԵՄ-ի աուդիտի դիրեկտիվին, որի առանձին դրույթներով կարգավորվում է մասնագիտության նկատմամբ հանրային վերահսկողությունը:



26. Միջազգային փորձի, մասնավորապես ԵՄ անդամ երկրներում գործող կարգավորման համակարգերի ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ երկաստիճան կարգավորման մոդելն է հիմնականում գործում ԵՄ անդամ երկրներում և ՀՀ-ում նմանատիպ համակարգի ներդնումը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին: Ընդ որում, նման հայեցակարգ է սահմանված նաև աուդիտորական գործունեությունը կարգավորող ԵՄ դիրեկտիվում, որը նախատեսում է հանրային վերահսկողության անհրաժեշտությունը՝ աուդիտի արդյունավետ համակարգ ունենալու համար: Պետք է նշել նաև, որ ԵՄ անդամ երկրներում կիրառվում է և՛ որպես հանրային վերահսկողության առանձին, և՛ անկախ մարմին ձևավորելու մոտեցումը, ինչպես նաև որոշ դեպքերում որևէ պետական մարմնի կազմում կամ ենթակայությամբ դրա կիրառման հնարավորությունը:

27. Վրաստանում ևս գործում է մասնագիտացված կառույց, որը պատասխանատու է մասնագիտական որակավորումներ և շարունակական մասնագիտական զարգացման համակարգի արդյունավետ գործունեության համար, իսկ մասնագիտացված կառույցի նկատմամբ հսկողությունն ու աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ հանրային վերահսկողությունն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարության առընթեր հաշվապահության, ֆինանսական հաշվետվականության ու աուդիտի վերահսկողության ծառայությունը, որը գործում է բյուջետային մարմնի կարգավիճակով:

28. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրները հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու տեսանկյունից գտնվում են զարգացման տարբեր փուլերում: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնությունում, օրինակ, գործում են մասնագիտացված մի քանի կառույցներ, որոնց պատվիրակված է աուդիտորների որակավորման գործընթացի կազմակերպումը, ոչ հանրային նշանակության ընկերությունների աուդիտի նկատմամբ որակի հսկողությունը, ստանդարտների թարգմանությունը: Մասնագիտացված կազմակերպությունների նկատմամբ վերահսկողությունը, հանրային նշանակության ընկերությունների աուդիտի որակի նկատմամբ հսկողությունն ու ոլորտի պետական քաղաքականության սահմանումն իրականացնում է պետությունը՝ ի դեմս ՌԴ ֆինանսների նախարարության և ՌԴ դաշնային գանձապետարանի:

29. Բելառուսում ոլորտների կարգավորման և վերահսկողության գործառույթները կենտրոնացված են պետության մոտ՝ ֆինանսների նախարարության ու Ազգային բանկի միջոցով:

30. Ղազախստանում գործում է ՀՀ-ում ներկայումս գործող մոդելը, այն է՝ կարգավորման ու վերահսկողության գործառույթներն իրականացվում են պետության կողմից՝ ֆինանսների նախարարության միջոցով, իսկ աուդիտորների որակավորումն իրականացվում է մասնագիտացված կառույցների կողմից:

31. Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ ներկայումս քննարկվում է ԵՏՄ տարածքում Աուդիտորական գործունեության մասին համաձայնագրի նախագիծը, որի աշխատանքային հանդիպումներին իրենց մասնակցությունն են ցուցաբերում նաև ՀՀ ֆինանսների նախարարության մասնագետները: Համաձայնագրի դրույթները, ընդհանուր առմամբ համահունչ են սույն հայեցակարգով առաջարկվող մոտեցումների հետ, մասնավորապես, որպես բոլոր կողմերի համար ընդունելի մոտեցում առաջարկվում է դիտարկել լիցենզավորման գործընթացի փոխարեն աուդիտորական կազմակերպությունների ռեեստրի ներդրումը:

32. Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում ներկայումս կարևոր խնդիր է հանդիսանում ոլորտների կարգավորման և վերահսկողության հետագա մոտեցումների սահմանումը, թե ինչպես պետք է հաշվապահական հաշվառման և աուդիտի կանոնակարգման համար պարտականություններն արդյունավետորեն բաշխվեն: Համաշխարհային Բանկի 2008թ. «Հաշվապահական հաշվառման և աուդիտի Ստանդարտների և կանոնների պահպանման» հաշվետվության շրջանակներում առաջարկվում էր, որ սա կարող է ապահովվել ՀՀ ֆինանսների նախարարությանը կից Հանրային վերահսկողության խորհրդի վերահսկողությամբ գործող Հաշվապահների և աուդիտորների պալատին որոշ գործառույթներ պատվիրակելով: Պալատը նախատեսվում է ստեղծել օրենքով, որը կարող է հանդիսանալ ՀՀԱԱ-ի իրավահաջորդը: Այս առաջարկի իրականացման հետ կապված մշակվել է նոր օրենսդրական փաթեթ, որը ներկայումս գտնվում է լրամշակման փուլում և նպատակ ունի իրականացնել վերը նշված առաջարկը:

33. Վերոհիշյալ հանգամանքները, ինչպես նաև միջազգային լավագույն պրակտիկայում առկա կարգավորումները հաշվի առնելով, նախընտրելի է ՀՀ-ում ևս

ներդնել ոլորտների կարգավորման և վերահսկողության նոր համակարգ՝ հիմք ընդունելով «Հանրային Վերահսկողության Խորհուրդ - մասնագիտացված կառույց (պալատ)» բազային մոդելը:

34. Դեռևս 2013 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակվել է ոլորտների կարգավորման և վերահսկողության նոր հայեցակարգ, որի դրույթներն ամփոփվել են օրենսդրական նոր փաթեթում: Նշված փաթեթը ներառում է 3 օրենքի նախագիծ՝

- 1) «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ,
- 2) «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ,
- 3) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

35. Նախագծերը մշակման հիմքում ընկած է եղել ԵՄ դիրեկտիվներին համապատասխանությունը: Կազմակերպությունների համար սահմանվելու է հաշվետվողականության եռաստիճան համակարգ՝ ամբողջական ՖՀՄՍ-ներ, ՓՄԿ-ների ՖՀՄՍ և միկրոկազմակերպությունների պարզեցված կարգ:

## 5. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

36. Ինչպես արդեն նշվել է, ոլորտների կարգավորման և վերահսկողության հիմնական կարգավորումները ներկայացվելու են 3 օրենքի նախագիծ ներառող օրենսդրական նոր փաթեթում:

### 1) «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք

37. Բարեփոխումների հիմնական նպատակներից է հնարավորինս միանման պահանջներ սահմանել համեմատաբար փոքր կազմակերպությունների համար: Այդ նպատակը հիմք ընդունելով՝ Հայեցակարգի հիմքում ընկած է «սկզբում մտածիր փոքրերի համար» սկզբունքը՝ նշված կազմակերպությունների համար վարչարարական անհամաչափ բեռ չսահմանելու տեսանկյունից: Այս հիմնավորմամբ էլ հաշվետվությունների պարտադիր աուդիտի պահանջը չի տարածվի համեմատաբար փոքր ընկերությունների վրա:

38. Ներկայում տարբեր օրենքներով պարտադիր աուդիտի ենթակա է 1174 կազմակերպություն, որոնց գերակշիռ մասը (շուրջ 54%-ը) որևէ գործունեություն

չիրականացնող բաց բաժնետիրական ընկերություններն են: Բարեփոխումների նպատակն է նաև հստակեցնել նշված կազմակերպությունների շրջանակը՝ աուդիտի պահանջը տարածելու իրապես հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպությունների, այլ ոչ թե ֆորմալ առումով օրենքի պահանջին բավարարող կազմակերպությունների նկատմամբ:

39. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ նոր օրենքով նախատեսվում է սահմանել հաշվետվողականություն ունեցող, խոշոր, փոքր, միջին, ինչպես նաև միկրո կազմակերպությունների, ինչպես նաև խմբերի հասկացությունները՝ հստակեցնելով, թե նշված կազմակերպությունները կամ խմբերը հաշվապահական հաշվառման մեթոդաբանական ինչպիսի հիմքեր պետք է կիրառեն և ինչպիսի իրավական ակտերով պետք է առաջնորդվեն: Կազմակերպությունների՝ վերը նշված բնորոշման ու տարանջատման համար հիմք են ընդունվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ արտացոլված համախառն ակտիվների հաշվեկշային արժեքը (հաշվեկշռի ընդհանուր գումարը), հիմնական գործունեությունից հասույթն ու աշխատողների միջին տարեկան թվաքանակը, քանի որ, որպես կանոն, այս չափանիշները օբյեկտիվ տեղեկատվություն են տրամադրում կազմակերպության չափերի վերաբերյալ:

40. Մասնավորապես, կազմակերպությունների (խմբերի) բնորոշումները տրվել են հետևյալ կերպ՝

**1) հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպություն.**  
կազմակերպություն՝

ա) որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերի հրապարակային առաջարկ անող անձ կամ հաշվետու թողարկող, բացառությամբ հրապարակային առաջարկ անող անձ կամ հաշվետու թողարկող հանդիսացող Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը, կամ

բ) որը հանդիսանում է բանկ, վարկային կազմակերպություն, վճարահաշվարկային կազմակերպություն, ներդրումային ընկերություն, կարգավորվող շուկայի օպերատոր, կենտրոնական դեպոզիտարիա, ապահովագրական ընկերություն,

վերաապահովագրական ընկերություն, ապահովագրական բրոքերային կազմակերպություն կամ ներդրումային ֆոնդի կառավարիչ.

**2) խոշոր կազմակերպություն.** կազմակերպություն, որը հաշվետու տարվան անմիջապես նախորդող տարվա վերջի դրությամբ գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ) հիմնական գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ) Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

**3) միջին կազմակերպություն.** կազմակերպություն, որը չի հանդիսանում փոքր կամ միկրո կազմակերպություն և որը հաշվետու տարվան անմիջապես նախորդող տարվա վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ) հիմնական գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ) Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

**4) փոքր կազմակերպություն.** կազմակերպություն, որը չի հանդիսանում միկրո կազմակերպություն և որը հաշվետու տարվան անմիջապես նախորդող տարվա վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ երկու միլիարդ դրամ.

բ) հիմնական գործունեությունից հասույթը՝ չորս միլիարդ դրամ.

գ) Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ հարյուր.

**5) միկրո կազմակերպություն.** կազմակերպություն, որը հաշվետու տարվան անմիջապես նախորդող տարվա վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ հարյուր յոթանասունհինգ միլիոն դրամ.

բ) հիմնական գործունեությունից հասույթը՝ երեք հարյուր միլիոն դրամ.

գ) Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ տասը.

**6) խումբ.** մայր կազմակերպությունը և իր դուստր կազմակերպությունները.

**7) մայր կազմակերպություն.** կազմակերպություն, որը վերահսկում է մեկ կամ ավելի դուստր կազմակերպությունների.

**8) դուստր կազմակերպություն.** կազմակերպություն, որը վերահսկվում է մեկ այլ կազմակերպության կողմից.

**9) խոշոր խումբ.** խումբ, որը բացկացած է մայր կազմակերպությունից և դուստր կազմակերպություններից, որոնք ներառվում են համախմբման մեջ և որը մայր կազմակերպության հաշվետու տարվան անմիջապես նախորդող տարվա վերջի դրությամբ համախմբման հիմունքով գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տաս միլիարդ դրամ.

բ) հիմնական գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ) Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

**10) միջին խումբ.** խումբ, որը չի հանդիսանում փոքր խումբ, որը բաղկացած է մայր կազմակերպությունից և դուստր կազմակերպություններից, որոնք ներառվում են համախմբման մեջ և որը մայր կազմակերպության հաշվետու տարվան անմիջապես նախորդող տարվա վերջի դրությամբ համախմբման հիմունքով չի գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տաս միլիարդ դրամ:

բ) հիմնական գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ:

գ) Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն:

**11) փոքր խումբ.** խումբ, որը բացկացած է մայր կազմակերպությունից և դուստր կազմակերպություններից, որոնք ներառվում են համախմբման մեջ և որը մայր կազմակերպության հաշվետու տարվան անմիջապես նախորդող տարվա վերջի դրությամբ համախմբման հիմունքով չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը:

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ երկու միլիարդ դրամ:

բ) հիմնական գործունեությունից հասույթը՝ չորս միլիարդ դրամ:

գ) Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ հարյուր:

41. Որպես այլընտրանք, խմբերի տեսակը բնորոշող ցուցանիշների գումարները կարելի է հաշվարկել ոչ թե համախմբման հիմունքով, այլ համապատասխան ցուցանիշների թվաքանակային գումարման միջոցով: Այս դեպքում հաշվեկշռի և հասույթի ցուցանիշների գումարները համապատասխանաբար ավելանում են քսան տոկոսով:

42. Նախատեսվում է հստակեցնել, որ կազմակերպության ղեկավարությունն է պատասխանատու լինելու հաշվապահական հաշվառում կազմակերպելու և ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար, ինչպես նաև սահմանվել է կազմակերպության ղեկավարություն հասկացությունը:

43. Հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպություններում գլխավոր հաշվապահ կարող է աշխատել միայն հաշվապահի կամ աուդիտորի որակավորում ունեցող և Պալատի անդամ հանդիսացող անձը, իսկ բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերահսկվող այլ կազմակերպություն-

ներում՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած պահանջներին համապատասխան որակավորում ունեցող գլխավոր հաշվապահը:

44. Հստակեցվելու է, որ ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանվում է համապատասխան ստանդարտներով և պարզեցված կազով, իսկ պարտադիր աուդիտի դեպքում ֆինանսական հաշվետվություններին կից պետք է ներկայացվի աուդիտորական եզրակացություն:

45. Նախատեսվում է սահմանել, որ միկրոկազմակերպություններից և փոքր կազմակերպություններից բացի մնացած բոլոր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ենթակա են հրապարակման:

46. Նախագծի համաձայն պարտադիր աուդիտի ենթակա են՝

1) հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները.

2) միջին կազմակերպությունները.

3) խումբը, որի մայր կազմակերպությունն ունի հանրային հաշվետվողականություն և խոշոր խմբերը.

4) միջին խմբերը:

47. Վերը նշված կազմակերպություններն ու խմբերը, ինչպես նաև տարբեր օրենքներով աուդիտի ենթակա կազմակերպությունները պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ, իսկ առանց աուդիտորական եզրակացության հրապարակված ֆինանսական հաշվետվությունները համարվելու են չհրապարակված:

48. Կազմակերպությունների ու խմբերի տարանջատման վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփված է ստորև ներկայացված աղյուսակում.



Հաշվետու միավոր	Չափանիշներ	Հաշվետվություններ պատրաստելու մեթոդաբանական հիմքը	Հաշվետվությունները ենթակա են հրապարակման	Հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի
<b>Հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>արժեթղթերի հրապարակային առաջարկ անող անձ կամ հաշվետու թողարկող</li> <li>ֆինանսական հատվածի կազմակերպություն.</li> </ul>	Ամբողջական ՖՀՄՍ-ներ	Այո	Այո
<b>Խոշոր կազմակերպություն</b>	<p>Գերազանցել է առնվազն 2-ը</p> <ul style="list-style-type: none"> <li>հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 10 մլրդ դրամ.</li> <li>հասույթը՝ 20 մլրդ դրամ.</li> <li>աշխատողների թվաքանակը՝ 250</li> </ul>	Ամբողջական ՖՀՄՍ-ներ	Այո	Այո
<b>Միջին կազմակերպություն</b>	<p>Չի հանդիսանում փոքր կամ միկրո և չի գերազանցել առնվազն 2-ը</p> <ul style="list-style-type: none"> <li>հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 10 մլրդ դրամ.</li> <li>հասույթը՝ 20 մլրդ դրամ.</li> <li>աշխատողների թվաքանակը՝ 250</li> </ul>	ՓՄԿ-ների ՖՀՄՍ	Այո	Այո
<b>Փոքր կազմակերպություն</b>	<p>Չի հանդիսանում միկրո և չի գերազանցել առնվազն 2-ը</p> <ul style="list-style-type: none"> <li>հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 2 մլրդ դրամ.</li> <li>հասույթը՝ 4 մլրդ դրամ.</li> <li>աշխատողների թվաքանակը՝ 100</li> </ul>	ՓՄԿ-ների ՖՀՄՍ	Ոչ	Ոչ
<b>Միկրո կազմակերպություն</b>	<p>Չի գերազանցել առնվազն 2-ը</p> <ul style="list-style-type: none"> <li>հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 175 մլն դրամ.</li> <li>հասույթը՝ 300 մլն դրամ.</li> <li>աշխատողների թվաքանակը՝ 10</li> </ul>	Պարզեցված կարգ	Ոչ	Ոչ
<b>Խոշոր խումբ</b>	<p>Գերազանցել է առնվազն 2-ը</p> <ul style="list-style-type: none"> <li>համախմբված հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 10 մլրդ դրամ.</li> <li>համախմբված հասույթը՝ 20 մլրդ դրամ.</li> <li>համախմբված աշխատողների թվաքանակը՝ 250</li> </ul>	Ամբողջական ՖՀՄՍ-ներ	Այո	Այո
<b>Միջին խումբ</b>	<p>Չի հանդիսանում փոքր խումբ և չի գերազանցել առնվազն 2-ը</p> <ul style="list-style-type: none"> <li>համախմբված հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 10 մլրդ դրամ.</li> <li>համախմբված հասույթը՝ 20 մլրդ դրամ.</li> <li>համախմբված աշխատողների թվաքանակը՝ 250</li> </ul>	ՓՄԿ-ների ՖՀՄՍ	Այո	Այո
<b>Փոքր խումբ</b>	<p>Չի գերազանցել առնվազն 2-ը</p> <ul style="list-style-type: none"> <li>համախմբված հաշվեկշռի ընդհանուր գումարը՝ 2 մլրդ դրամ.</li> <li>համախմբված հասույթը՝ 4 մլրդ դրամ.</li> <li>համախմբված աշխատողների թվաքանակը՝ 100</li> </ul>	ՓՄԿ-ների ՖՀՄՍ	Ոչ*	Ոչ*

\*բացառությամբ եթե մայր կազմակերպությունն ունի հանրային հաշվետվողականություն

2) «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք

49. Կարելի է նշել, որ կարևորագույն փոփոխություններից մեկը, որը միաժամանակ բարեփոխումների առանքցային ուղղություններից է հանդիսանում, աուդիտի որակի վերահսկողության համակարգի ներդրումն է: Աուդիտորական կազմակերպությունների կողմից կիրառվող աուդիտի որակի վերահսկողության համակարգի նկատմամբ Պալատը սահմանելու է հսկողություն իրականացնելու համակարգ: Վերջինս պետք է առնվազն բավարարի հետևյալ սկզբունքներին՝ ֆինանսական և մասնագիտական առումով անկախ լինի աուդիտորական կազմակերպություններից, որակի հսկողություն իրականացնող անձինք պետք է ունենան պատշաճ մասնագիտական որակավորում և փորձ, հսկողության համակարգը ամբողջությամբ պետք է ներառի Աուդիտի միջազգային ստանդարտների պահանջները, հսկողությունը պետք է իրականացվի բավարար պարբերականությամբ՝ ոչ պակաս քան երեք տարին մեկ անգամ, իսկ որակի հսկողության արդյունքները պետք է լինեն հրապարակային:

50. Նախատեսվում է, որ անդրադարձ է կատարվելու նաև աուդիտորների որակավորման հետ կապված հարաբերություններին, սահմանելով, որ որակավորումն իրականացվում է քննությունների, ինչպես նաև կրթությանն ու աշխատանքային փորձին ներկայացվող պահանջների միջոցով, իսկ քննությունները կազմակերպում և անցկացնում է Պալատը:

51. Նախատեսվում է վերանայել աուդիտորական կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը՝ հաշվառման նոր համակարգի ներդրման միջոցով (Աուդիտորական կազմակերպությունների ռեեստր), որը նախատեսվում է նաև ներկայումս քննարկվող ԵՏՄ «Աուդիտորական գործունեության մասին» համաձայնագրով և իրենից ներկայացնում է միջազգային լավագույն փորձը:

3) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենք

52. Նախատեսվում է տարանջատել ոլորտների կարգավորման և վերահսկողության գործառույթները՝ դրանք պատվիրակելով երկու մարմինների:

Կարգավորման գործառույթն իրականացնելու համար օրենքով պետք է ստեղծվի մասնագիտացված ինքնակարգավորվող կառույց՝ Հայաստանի որակավորված հաշվապահների և աուդիտորների պալատ, իսկ վերահսկողությունն իրականացվելու է Հանրային վերահսկողության խորհրդի կողմից, որը լինելու է ՀՀ ֆինանսների նախարարությանը կից հասարակական հիմունքներով գործող մարմին: Նախատեսվում է, որ այն բաղկացած կլինի 7 անդամից՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներկայացուցիչներից կազմված:

53. Պալատը բնորոշվելու է որպես հաշվապահների և աուդիտորների, հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց անդամության հիման վրա օրենքով սահմանված կարգով ստեղծված ինքնակարգավորվող ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություն: Այն հանդիսանալու է մասնագիտական միավորում, որը չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:

54. Պալատը հիմնական գործառույթներն են հանդիսանալու Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և Աուդիտի միջազգային ստանդարտների թարգմանությունն ու խմբագրումը, հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի մշակումն ու հաստատումը, միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման պարզեցված կարգի մշակումը, հաշվապահների և աուդիտորների որակավորման քննությունների կազմակերպումն ու անցկացումը, հաշվապահների և աուդիտորների վարքագծի կանոնների, շարունական մասնագիտական զարգացման պահանջների սահմանումը և այդ կանոնների ու պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացումը, աուդիտ իրականացնող անձանց կողմից աուդիտորական գործունեության մասին իրավական ակտերի, այդ թվում աուդիտորական կազմակերպությունների կողմից ռեեստրում գրանցվելու պահանջների, ինչպես նաև Աուդիտի միջազգային ստանդարտների ձեռնարկի պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացումը: Պալատը նաև ակտիվորեն համագործակցելու է Հանրային վերահսկողության

խորհրդի հետ վերը նշված իրավական ակտերը խորհրդի հետ համաձայնեցնելով, ինչպես նաև պարբերաբար հաշվետվություններ և տեղեկատվություն տրամադրելու միջոցով:

55. Պալատի գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հանդիսանալու Պալատի ֆիզիկական անձ և կորպորատիվ անդամներից գանձվող անդամավճարները, հրապարակումների վաճառքից ստացվող հասույթները, մասնագիտական որակավորման քննությունների անցկացման համար սահմանված վճարները, տարբեր դասընթացների անցկացումից ստացված հասույթները, պետական և ոչ պետական կառույցներից (այդ թվում՝ օտարերկրյա), ստացված նվիրատվությունները, դրամաշնորհները, օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտները: Պալատի կորպորատիվ անդամ են հանդիսանալու ռեեստրում գրանցված՝ աուդիտի և (կամ) աուդիտին հարակից ծառայություններ, ինչպես նաև, կամավորության սկզբունքով, խորհրդատվական, այդ թվում՝ հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպությունները:

56. Նախատեսվում է, որ ֆիզիկական անձ հանդիսացող անդամների անդամավճարները կլինեն հաստատուն, իսկ կորպորատիվ անդամների անդամավճարները բաղկացած կլինեն երկու բաղադրիչից՝ առաջինը՝ ներկայումս գանձվող պետական տուրքի գումարը (տարեկան 250.000 դրամ), որը հաստատուն է բոլոր անդամների համար, իսկ երկրորդը՝ կախվածության մեջ կլինի կորպորատիվ անդամի ստացած հասույթներից:

57. Նախատեսվում է Պալատը ստեղծել ներկայումս գործող Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա հասարակական կազմակերպության վերակազմակերպմամբ:

58. Ընդհանուր առմամբ բարեփոխումների կարող են իրականացվել գործողությունների հետևյալ հնարավոր սցենարներով.

1) «Ոչինչ չանել», այսինքն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը շարունակում է իրականացնել և կարգավորման, վերահսկողության գործառույթները: Տվյալ դեպքում առնվազն անհրաժեշտ է վերականգնել 2017 թվականի սկզբին լուծարված ՀՀ ֆինանսների նախարարության Աուդիտի

հսկողության տեսչությունը՝ համալրելով բարձր որակավորում ունեցող առնվազն 10-12 աշխատակիցներով, միաժամանակ, համալրելով նաև կարգավորման գործառույթն իրականացնող ստորաբաժանումը՝ առնվազն 3 աշխատակիցներով: Այդ պարագայում լրացուցիչ բյուջետային ծախսերը կգնահատվեն տարեկան շուրջ 28 մլն դրամ:

Մեկ տեսչության պետ՝  $5.71 * 66140 * 12$  ամիս = 4.500.000

Երկու բաժինների պետեր –  $3.88 * 66140 * 2 * 12$  ամիս = 6.150.000

Չորս գլխավոր մասնագետներ –  $3.21 * 66140 * 4 * 12$  ամիս = 10.200.000

Չորս առաջատար մասնագետներ –  $2.28 * 66140 * 4 * 12$  ամիս = 7.200.000

**2) Կարգավորման և վերահսկողության գործառույթները տարանջատել՝ հանրային վերահսկողության խորհուրդի գործառույթն իրագործելու նպատակով ստեղծել նոր պետական կառույց:** Տվյալ դեպքում պետական բյուջեի եկամուտները նվազում են լիցենզավորման արդյունքում հավաքագրվող տարեկան շուրջ 8 մլն դրամ գումարի չափով, որը անդամավճարների տեսքով ուղղվում է կարգավորման գործառույթն իրականացնող մարմնին՝ Պալատին, միաժամանակ անհրաժեշտություն է առաջանում ձևավորել նոր մարմին առանձին աշխատակազմով, առնվազն 10-12 աշխատակիցներով: Հաշվի առնելով տվյալ ոլորտի աշխատավարձերի առկա մակարդակը, միջին գնահատականներով միայն աշխատավարձերի մասով տարեկան շուրջ 30-40 մլն դրամի ծախս կատարելու անհրաժեշտություն կառաջանա:

**3) Կարգավորման և վերահսկողության գործառույթները տարանջատել Պալատի և ՀՀ ֆինանսների նախարարությանը կից հանրային վերահսկողության խորհրդի միջև, որը գործում է հասարակական հիմունքներով:** Այս տարբերակը, ըստ էության սույն հայեցակարգով առաջարկվող տարբերակն է, որի դեպքում աշխատակազմի գործառույթը կամ քարտուղարությունը կատարում է ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանումը, իսկ պետական բյուջեի նկատմամբ ազդեցությունը գնահատվում է եկամուտների՝ լիցենզավորման արդյունքում ներկայումս հավաքագրվող տարեկան շուրջ 8 մլն դրամ գումարի չափով նվազեցում, որը անդամավճարների տեսքով ուղղվելու է Պալատին:

## 6. ԱՄՓՈՓ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

59. Բարեփոխումների արդյունքում ակնկալվում է հետևյալ հիմնական արդյունքերի ստացումը.

1) ստեղծել մասնագիտացված կառույց՝ «Հայաստանի որակավորված հաշվապահների ու աուդիտորների պալատ», որը կիրականացնի հաշվապահության և աուդիտի ոլորտի զարգացման համար անհրաժեշտ գործառույթները, մասնավորապես՝ մասնագետների որակավորման և շարունակական զարգացման, ՖՀՄՍ-ների և Աուդիտի միջազգային ստանդարտների ժամանակին թարգմանության, աուդիտի որակի ապահովման համար անհրաժեշտ գործողությունների իրականացումը.

2) ՀՀ ֆինանսների նախարարությանը կից ստեղծել Հանրային վերահսկողության խորհուրդ, որը պատասխանատու կլինի հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու համար.

3) ճշգրտել տարեկան աուդիտի պարտադիր պահանջ ունեցող կազմակերպությունների շրջանակը՝ փոփոխված չափանիշներով խոշոր համարվող կազմակերպությունների համար, որոնց սահմանումը կհամապատասխանեցվի ԵՄ-ի դիրեկտիվներով ներկայացված չափանիշներին,

4) վերանայել աուդիտորական կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը՝ հաշվառման նոր համակարգի ներդրման միջոցով (Աուդիտորական կազմակերպությունների ռեեստր):

60. Ներկայում ՀՀ-ում գործող կազմակերպությունների համար պարտադիր աուդիտի պահանջ սահմանվում է տարբեր օրենքներով՝ հաշվի առնելով տվյալ կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը՝ հանրության համար որոշակի հետաքրքրություն ներկայացնելու հանգամանքը: Մասնավորապես, այդ կազմակերպությունների թվին են դասվում բաց բաժնետիրական ընկերությունները, ֆինանսական հատվածի կազմակերպությունները, խաղատներն ու շահումով խաղերի կազմակերպիչները, հեռուստա-ռադիոընկերությունները, հիմնադրամները: Ընդհանուր առմամբ 2016 թվականի

հունվարի մեկի դրությամբ պարտադիր աուդիտի ենթակա էր 1174 կազմակերպություն, որոնցից փաստացի աուդիտի են ենթարկվել 391-ը կամ 33.3%-ը:

61. Պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների մեջ գերակշռում է բաց բաժնետիրական ընկերությունների թիվը՝ 851 կազմակերպություն, որը կազմում է պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների ընդհանուր թվաքանակի 72.5%-ը: ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տվյալների համաձայն պարտադիր աուդիտի է ենթարկվել թվով 64 ԲԲԸ կամ պարտադիր աուդիտի է ենթակա ԲԲԸ-ների ընդհանուր թվաքանակի 7.5%-ը:

62. Բաց բաժնետիրական 851 ընկերություններից 669-ը կամ 79%-ը 2015թ. ընթացքում գործունեություն չի իրականացրել, իսկ 624-ի կամ 73%-ի և՛ հաշվետու տարվա գործունեությունից հասույթը, և՛ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 0:

63. Վերոգրյալը ամփոփելով կարելի է եզրակացնել, որ պարտադիր աուդիտի ենթակա ընդհանուր 1174 կազմակերպություններից 57%-ը չնայած գործունեություն չիրականացնելու հանգամանքին, հանդիսանում է պարտադիր աուդիտի ենթակա: Այս կազմակերպությունները հիմնականում հետխորհրդային անցումային ժամանակահատվածում սեփականաշնորհված և գործունեություն չիրականացնող կազմակերպություններն են:

64. Նշված ժամանակահատվածում պարտադիր աուդիտի ենթակա 22 բանկերից բոլորն էլ ենթարկվել են աուդիտի: Նույն իրավիճակն է նաև վարկային կազմակերպությունների, ապահովագրական և ֆինանսական հատվածի մյուս կազմակերպությունների դեպքում: Պարտադիր աուդիտի ենթակա 154 հիմնադրամները, 11 շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղեր) և խաղատների կազմակերպիչները նույնպես ենթարկվել են աուդիտի:

65. Վերը նշված տեղեկատվությունը վկայում է, որ առկա է պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը ճշգրտելու անհրաժեշտություն, որի արդյունքում օրենքի ուժով, բայց իրականում գործունեություն չիրականացնող և հանրության համար տեղեկատվության տեսանկյունից հետաքրքրություն չներկայացնող կազմակերպությունները չեն համարվի պարտադիր աուդիտի ենթակա, փոխարենը պարտադիր աուդիտի

ենթակա կազմակերպությունների ցանկում ներառելով իրականում հանրային հետաքրքրություն ունեցող կազմակերպությունների: Արդյունքում նաև պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակը կհամապատասխանի ԵՄ աուդիտի և հաշվապահական հաշվառման համապատասխան դիրեկտիվների պահանջներին: Դա նշանակում է, որ աուդիտի ենթակա կլինեն ոչ թե, օրինակ, կազմակերպա-իրավական տեսանկյունից բաց բաժնետիրական հանդիսացող ընկերությունները, այլ նրանք, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերի հրապարակային առաջարկ անող անձ կամ հաշվետու թողարկող կամ կբավարարեն օրենքով սահմանված քանակային որոշ չափանիշների (օրինակ՝ գործունեությունից հասույթ, ակտիվների հաշվեկշռային արժեք, աշխատողների թվաքանակ):

66. Մասնավորապես, բացի վերը նշված պայմաններին բավարարող կազմակերպություններից (արժեթղթերի հրապարակային առաջարկ անող անձ կամ հաշվետու թողարկող), փոփոխված չափանիշներով (գործունեությունից հասույթ 4 մլրդ ՀՀ դրամ, ակտիվների արժեք՝ 2 մլրդ դրամ, աշխատողների թվաքանակ՝ 100) դիտակելու դեպքում պարտադիր աուդիտի ենթակա ներկայիս 851 բաց բաժնետիրական ընկերություններից աուդիտի ենթակա լինի ընդամենը 20-ը: Նշված բարեփոխումը ենթադրում է օրենսդրական փոփոխության կատարում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում:

67. Ամփոփելով վերոհիշյալը, բարեփոխումների արդյունքում պարտադիր աուդիտի պահանջի հստակեցման և ԵՄ դիրեկտիվներին համապատասխանեցնելու հետևանքով պարտադիր աուդիտի «ենթարկվողների» թիվը 1174-ից կնվազի և կկազմի շուրջ 590:

68. Բարեփոխումները ներկայացնող օրենքների նախագծերը լայնորեն քննարկվելու է ինչպես գործարար միջավայրի, այնպես էլ ոլորտի մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների հետ: Այս առումով, ՀՀ ֆինանսների նախարարությունը նախատեսում է տարբեր ձևաչափերով օրենքների նախագծերը լայնորեն քննարկել բոլոր շահագրգիռ կողմերի հետ:



69. Օրենքների նախագծերը կտեղադրվեն ՀՀ ֆինանսների նախարարության [www.minfin.am](http://www.minfin.am) հասցեով գործող պաշտոնական կայք-էջում, իսկ առաջարկությունները կարող են ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

70. Նախատեսվում է, որ բարեփոխումները ներկայացնող օրենքների նախագծերը ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը կներկայացվեն 2017 թվականի աշնանը:

71. Օրենքների նախագծերի գործողությունը նախատեսվում է 2019 թվականի հունվարի 1-ից: